

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

2015-2018

ՎԱՆԱԶՈՐ

2015

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մանկավարժության ֆակուլտետը ՎՊՀ-ի ստորաբաժանումներից է, որը մի շարք մասնագիտությունների գծով կրթական, գիտական և ստեղծագործական գործունեություն է ծավալում և իրականացնում է վերջնարդյունքների հիման վրա մշակված մասնագիտական կրթական ծրագրեր՝ բակալավրի և մագիստրոսի մակարդակով:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մանկավարժության ֆակուլտետի տեսլականն է մանկավարժության, հոգեբանության, սոցիալական մանկավարժության, կերպարվեստի, երաժշտական կրթության (բակալավրի), «Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության», «Կրթության կառավարում» (մագիստրոսի) կոմպլեքսային մասնագետների պատրաստում, որը կբավարարի աշխատաշուկայի պահանջները, հյուսիսային տարածաշրջանում կապահովի կայուն զարգացում, կմատուցի կրթական ծրագրեր հիշյալ մասնագիտություններով և կդառնա գիտական հետազոտություններ իրականացնող համալսարանական ստորաբաժանում:

Ֆակուլտետը ձգտում է իր գործունեությունն իրականացնել շահառու կողմերի կարիքների և իր որդեգրած քաղաքականության հիմնադրամաբ:

Մանկավարժության ֆակուլտետը, առաջնորդվելով ՎՊՀ-ի զարգացման հայեցակարգով (2014-2018), ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ:

ՎՊՀ-ի մանկավարժության ֆակուլտետը հիմնադրվել է 1969 թվականին՝ որպես ՎՊՄԻ կառուցվածքային ստորաբաժանում. Այն իր գործունեությունն իրականացրել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հիմնվելով համալսարանի (ինստիտուտի) և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա:

Ֆակուլտետն իր գործունեության 46 տարիների ընթացքում պատվով է կատարել իր առջև դրած խնդիրները՝ բավարարելով ուսանողների պահանջմունքները ինտելեկտուալ, մշակութային և բարոյական զարգացման, բարձրագույն կրթության և համապատասխան որակավորման ձեռքբերման հարցերում, պատրաստել է բարձրագույն կրթությամբ բարձրորակ մասնագետներ , որոնք քննություն են բռնել Լոռու մարզում, հանրապետությունում, մերձավոր ու հեռավոր Սփյուռքում: Ֆակուլտետի շրջանավարտները դարձել են որակյալ մասնագետներ տարրական կրթության, սոցիալական մանկավարժության, հոգեբանության, երաժշտության և կերպարվեստի բնագավառում: Բավական է ասել, որ ֆակուլտետն սպասարկող հենակետային ամբիոնների դասախոսների ճնշող մեծամասնությունը մանկավարժության ֆակուլտետի շրջանավարտներ են:

Մանկավարժության ֆակուլտետն ունի իր ստորաբաժանումները՝ ամբիոններ, մանկավարժության և հոգեբանության ինտերնետային կաբինետ, համակարգչային կենտրոն, ցուցասրահներ, հատուկ լսարաններ կերպարվեստի և երաժշտական կրթության բաժինների ուսանողների համար:

Ֆակուլտետի կազմավորման առաջին իսկ օրվանից գործել է «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունը: Հետագայում բացվել են նոր մասնագիտություններ՝ «Նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն» (1975թ.), «Կերպարվեստ և գծագրություն» (1997թ.), « Երաժշտական կրթություն» (1997թ.), «Մանկավարժություն և հոգեբանություն» (2000թ.), «Սոցիալական մանկավարժության» (2005թ.), «Մանկավարժություն և սոցիոլոգիա»(2007թ.): 2008 թվականից ֆակուլտետում գործում է մագիստրատուրա հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Մանկավարժություն և հոգեբանություն», «Կրթության կազմակերպում», որը փոխարինվեց «Կրթության կառավարում» 2013 թվականից: Առաջիկայում մագիստրոսական կրթություն է կազմակերպվելու «Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվություն», «Հոգեբանություն» մասնագիտություններով:

Մանկավարժության ֆակուլտետում իրականացվող կրթական բարեփոխումների վերջնական նպատակը 21-րդ դարի մարտահրավերներին համապատասխանող որակյալ կրթության ապահովումն է, որն իր բովանդակությամբ համահունչ է Բոլոնյան գործընթացի սկզբունքներին:

Ֆակուլտետի բոլոր ամբիոններում արձանագրվել է գիտական գործունեության աննախադեպ առաջընթաց: Մանկավարժության ամբիոնի բոլոր դասախոսները (թվով 14) ունեն մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ ամբիոնի վարիչը՝ դոկտորի, նրանցից 8-ը նաև դոցենտներ են:

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 11 դասախոսներից 9-ը հոգեբանական գիտությունների թեկնածուներ են, որոնցից 6-ը նաև դոցենտներ:

Արվեստի ամբիոնի 10-ը դասախոսներից 8-ը դոցենտներ են:

Դասախոսների մեծ մասը գիտական աստիճաններն ու կոչումնորը ձեռք են բերել վերջին տասնամյակում:

Ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներին նպաստում են ժամանակակից համակարգիչներով և այլ տեխնիկական միջոցներով հագեցած 2 կաբինետները, հոգեբանական խորհրդատվության կենտրոնը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում և թարմացում:
2. Նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի վերջնական կազմում (Հոգեբանության/ բակալավր/, Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվություն/մագիստրատուրա/):
3. Կրթական նորագույն տեխնոլոգիաների զարգացում և կատարելագործում:
4. Կրեդիտային համակարգով ուսումնական գործունեության կազմակերպման պահանջներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մշակում և ներդրում:

5. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացում և ուսումնամեթոդական հենքի կատարելագործում:
6. Կրթական գործունեության թափանցիկության ապահովում:
7. Պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների, ընդհանուր և հատուկ դասընթացների ծրագրերի, ուսումնամեթոդական գրականության մշակում:
8. Ֆակուլտետի լավագույն դասախոսների աշխատանքային փորձի փոխանակում:
9. Մանկավարժական և հոգեբանական գիտությունների հետագա զարգացում և համագործակցություն այլ հաստատությունների հետ:
10. Ուսանողների մեջ համամարդկային արժեքների սերմանում, արհեստավարժության դերի բարձրացում:
11. Ուսանողների գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և դրանց մեջ հմտանալու խթանում (ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, ուսանողական գիտաժողովներ, բանավեճեր, ցուցահանդեսներ, կլոր սեղաններ, համերգային կատարումներ):

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Մանկավարժության ֆակուլտետի մասնագիտություններով պայմանավորված գիտաճյուղերի՝ մանկավարժության, հոգեբանության, արվեստի հեղինակության բարձրացում:
2. Ստեղծագործական և գիտական հետազոտությունների համագործակցության ընդլայնում:
3. Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման գործընթացների մշակում և մասնագիտական վերապատրաստման դասընթացների կատարելագործում:

4. Ֆակուլտետն սպասարկող ամբիոնների պլանային գիտահետազոտական աշխատանքների ընդլայնում և ուսանողների ներգրավում:
5. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ի գործունեության ընդլայնում և ակտիվ համագործակցության ծավալում հանրապետության և Բոլոնյան համակարգում ընդգրկված արտասահմանյան բուհերի ուսանողների հետ:
6. Միջբուհական, մարզային, բուհական փառատոների և ցուցահանդեսների կազմակերպում:

III.ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱԴԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Սոցիալ- հոգեբանական ծառայությունների բնագավառում պրիորիտետային նշանակություն ունեցող արժեքների սերմանում և ձևավորում (հանդուրժողականություն, հաղորդակցական մշակույթ, համամարդկային արժեքներ):
2. Բարձրագույն կրթությամբ համակողմանի ներդաշնակ զարգացած մասնագետի ձևավորում:
3. Շարունակական կրթության ծրագրի իրականացում:
4. Բարոյական, գեղագիտական, հայրենասիրական զգացմունքների ձևավորում:
5. Հոգեբանական մշակույթի և հոգեհիգիենայի պրոպագանդում:

IV.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Մասնագիտական կրթության իրականացում՝ որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխան:
2. Արտաքին շահառուների կարիքների վերհանման միջոցով մատուցվող կրթական ծառայության կատարելագործման ապահովում:
3. Ուսանողների և դասախոսական անձնակազմի կարիքների վերհանում և դրանց լուծման մեխանիզմների մշակում և ներդրում:
4. Ուսումնական ծրագրերի, դասավանդման որակի և ուսումնառության ռեսուրսների գնահատման ընթացակարգերի մշակում և ներդրում:

V. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

1. ՎՊՀ-ի՝ հանրապետական և արտաքին կապերի շրջանակներում միջազգային ծրագրերի մասնակցություն:
2. Մանկավարժության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների շարժունության ընդլայնում:
3. Ֆակուլտետի բոլոր ամբիոնների՝ որպես ուսումնական և գիտական կառույցների հեղինակության բարձրացում արտաքին միջավայրում:
4. Մասնակցություն միջազգային ծրագրերին:
5. Համագործակցություն հանրապետության և այլ երկրների ուսումնական հաստատությունների հոգեբանության, մանկավարժության և արվեստի ամբիոնների հետ:

VI. ՍՈՑԻԱԼ -ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հայրենասիրության, մարդասիրության որակների դաստիարակում թեմատիկ միջոցառումների, ցուցահանդեսների, համերգների, ներբուհական երգի մրցույթների միջոցով:

VII. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

2. Սահուն և համամասնական սերնդափոխության ապահովում:
3. Աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների մշակում:
4. Ամբիոնների աշխատակիցների պարտականություններին իրավունքների հստակ բաշխում:
5. Ամբիոնների կազմակերպչական մշակույթի ձևավորում:

VIII. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կրթությամբ մասնագետների պատրաստում:
2. Շահառուների հետ շրջանավարտների աշխատանքի տեղավորման համագործակցություն և աջակցություն:

3. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում և մեթոդական աջակցության ցուցաբերում:
4. Բուհ-դպրոց կապի ամրապնդում և մասնագիտական կողմնորոշման խթանում:
5. Հանրության իրազեկում ամբիոններում կազմակերպվող կրթական, գիտական միջոցառումների մասին:
6. Դիմորդներին հոգեբանական խորհրդատվության տրամադրում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
Կրթական գործունեություն						
1. Մասնագիտության կրթական ծրագրի կազմում և պարբերական վերանայում	1. ՄԿԾ-ների աուդիտ, 2. Մագիստրատուրայի կրթական ծրագրերի բովանդակային մասի կատարելագործում: 3. Մրցունակ, արհեստավարժ մասնագետների պատրաստում: 4. Բենչմարքինգի կատարում 5. Կրթական վերջնարդյունքների վերանայում և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջարկին:	1. Դեկան 2. Մանկավարժության, հոգեբանության և սոցիոլոգիայի, արվեստի ամբիոնների դասախոսներ	1. Ամբիոններ 2. Որակի ապահովման կենտրոն 3. Արտաքին շահակիցներ	2015-2016	Մրցունակ, արհեստավարժ մասնագետներով ապահովում:	1. Կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման և բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման բացակայություն: 2. Գործատուների ներգրավվածության անբավարարություն: 3. Ուսանողների և դասախոսների շարժունության ցածր մակարդակ:
2. Մագիստրոսական ծրագրերի մշակում և ներդնում	1. «Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության», «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագրի մշակում և կատարելագործում	1. Հոգեբանության և մանկավարժության ամբիոնների դասախոսներ	1. Դեկանատ 2. Ուսանողներ 3. Արտաքին շահակիցներ	2015-2016	Առաջատար դիրք տարածաշրջանի այլ բուհերի համար	Բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների որակի անհամապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին:
3. Ուսումնական գործընթացի	1. Ուսուցման մեջ նորարարական	1. Դեկան 1. Ամբիոնների	1. Կաբինետի վարիչ	2015-2018	Ուսանողակենտրոն կրթական	Դիպլոմի հավելվածի միջազգային

կատարելագործում	տեխնոլոգիաների և մոտեցումնարի ներդրում: 2. Ուսումնական գործընթացն ապահովող ուսումնամեթոդական նյութերի ամբողջական բազայի ստեղծում: 3. Մանկավարժության և հոգեբանության կարիքների գրականության համալրում:	դասախոսներ			միջավայրի ձևավորում:	ճանաչման իրականացում
Գիտահետազոտական						
1. Դասախոսների գիտահետազոտական գործունեության ակտիվացում	1. Դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում: 2. Դասախոսների մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում: 3. Ամբիոնների մասնագիտացման ուղղությունների շրջանակներում գիտական և կիրառական հետազոտությունների զարգացում: 4. Գիտական զեկուցումներ	1. Ամբիոնների վարիչներ	1. Դեկան 2. Ամբիոններ	2015-2018	1. Գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճի ապահովում: 2. Երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ:	1. Գիտության ոլորտի գիտական անկախ փորձաքննության ապահովում: 2. Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում:

	կոնֆերանսներում					
2.Ուսանողների ընդգրում ամբիոնի գիտահետազոտական գործունեության մեջ	1.Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպում՝ ներառելով գիտական , ուսումնական և մասնագիտական ուղղությունը: 2. ՈՒԳԸ՝ ամենամյա ուսանողական գիտական կոնֆերանսի անցկացում ժամանակակից հոգեբանության, մանկավարժության հիմնախնդիրների թեմաներով:	1.Դեկան 2.Ամբիոնների դասախոսներ	Ֆակուլտետների և հանրապետության մյուս բուհերի ՈՒԳԸ-ների միջև	2015-2018	1.Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում: 2.Ուսանողական գիտական աշխատանքների արդյունքների դուրսբերում արտաքին միջավայր: 3. Ուսանողների ներգրավվածություն գիտաժողովներին, սեմինարներին:	1. Ուսանողների թվաքանակի նվազում: 2. Ուսանողների համար գիտական գործունեության ոչ գրավիչ դիրք՝ պայմանավորված ցածր վարձատրությամբ:
Մոցիալ- դաստիարակչական գործունեություն						
1.Ֆակուլտետում ակադեմիական խորհրդատվական ինստիտուտի կատարելագործում:	1. Ակադեմիական խորհրդատուների աշխատանքների ծրագրերի և պլանների մշակում:	1. Ակադեմիական խորհրդատուներ	1.Դեկան	2015-2018	Ուսանողների դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության դերի բարձրացում, նրանց կողմից	

					համամարդկային արժեքների կյարևորում:	
2. Ուսանողների համակողմանի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում:	1. Բարոյական, գեղագիտական, հայրենասիրական զգացմունքների ձևավորմանն ուղղված տարատեսակ միջոցառումների կազմակերպում և անցկացում:	1. Դեկան 2. Ամբիոնների դասախոսներ	1. Ուսխորհուրդ 2. Արհևկոմի նախագահ	2015-2018	Ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության համար տեխնոլոգիաների մատչելի պայմանների ապահովում:	
Որակի ապահովում						
1. Մատուցվող կրթական ծառայության կատարելագործում: 2. Աջակցություն մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացին:	1. Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացում, դրանց իրականացման խթանում և ուղղորդում դեպի որակի ապահովման եվրոպական չափանիշներ: 2. Դասախոսական կազմի կոմպետենտության բարձրացում: 3. Արտաքին շահառուների ընդգրկումը ավարտական պետական քննությունների հանձնաժողովներում: 4. Ուսանողների կրթական կարիքների վերհանում և	Ամբիոնների վարիչներ և դասախոսներ	1. Դեկանատ 2. Որակի ապահովման կենտրոն	2015-2018	Մասնագիտական կրթության մատչելիության և իրականացման թափանցիկության ապահովում:	Շահակիցների հետ սերտ համագործակցության բացակայություն:

	դրանց լուծման ուղիների մշակում:					
Արտաքին կապեր և միջազգայնացում						
1.Սպասարկող ամբիոնների՝ որպես ուսումնական և գիտական կառույցների հեղինակության բարձրացում արտաքին միջավայրում:	1.Մասնակցություն միջազգային, հանրապետական, մարզային նորարարական ծրագրերին և նախագծերին, արտասահմանյան բուհերում անցկացվող միջազգային գիտագործնական գիտաժողովներին և կոնֆերանսներին:	Ամբիոնների դասախոսներ	1.Դեկան 2. Արտաքին կապերի բաժին	2015-2018	Ֆակուլտետի կրթական ծառայությունների ապահովմամբ աշխատաշուկայում, ամբիոնների միջազգային հեղինակության բարձրացում, միջազգային ծրագրերի ակտիվ մասնակցություն:	Գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերից օգտվելու համար գիտափորձարարական լաբորատորիաների և նյութատեխնիկական բազայի պայմանների սղություն:
Կարիերայի և շրջանավարտներին աջակցություն						
1.Աշխատաշուկային անհրաժեշտ որակյալ կրթությամբ մասնագետների պատրաստում: 2.Շրջանավարտների մասնագիտական կարիերային աջակցություն:	1. Շրջանավարտներին աշխատանքի տեղավորման և անհրաժեշտ վերաորակավորման ուղիների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում: 2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովում: 3. Շրջանավարտներին մեթոդական աջակցության ցուցաբերում:	1.Դեկան 2.Ամբիոնների դասախոսներ	1.Կարիերայի կենտրոն 2.Շահառուներ 3.Գործատուներ	2015-2018	Մասնագետների որակավորման բարձրացում և վերավարկավորում:	Լոռու մարզում կրթական ծառայությունների և աշխատաշուկայի ներկա իրավիճակի ու զարգացման ուղղությունների մշտադիտարկման բացակայություն:

	4. Գործատուների և շրջանավարտների հանդիպումների կազմակերպում:					
Հասարակության հետ կապերի զարգացում						
1.«Բուհ-դպրոց կապ»-ի ընդլայնում և ամրացում: 2.Հանրության իրազեկում մանկավարժության, հոգեբանության, արվեստի ամբիոններում կազմակերպվող կրթական, գիտական և մշակութային գործընթացների մասին:	1.Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ տարածաշրջանի ավագ դպրոցների աշակերտների և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների հետ: 2.«Բաց դռների օրերի» անցկացում: 3.Ամբիոնների շնորհանդեսների անցկացում դպրոցներում: 4.Դիմորդներին հոգեբանամանկավարժական խորհրդատվության անցկացում: 5. Դիմորդների հետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում:	1.Դեկան 2. Ամբիոնների վարիչներ և դասախոսներ	1.Մարզի դպրոցների, միջին մասնագիտական հաստատությունների ղեկավարներ: 2.Մշակույթի կենտրոն:	2015-2018	1. Հասարակության հետ կապի ապահովում: 2. Հանրության շրջանում համալսարանի հեղինակության աճի բարձրացում: 3.Հանրային կարիքների և աշխատաշուկայի պահանջների վերհանում:	Շահառուների և շրջանավարտների փոխադարձ կապի ապահովում:

Մանկավարժության ֆակուլտետի ղեկան

Թ.Ս. Շահվերդյան

